ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Ա.

Շնորհալի Գարեգին վարդապետ եւ միակ մտերիմ իմ փափ։

Պարոն Աւետիս հասաւ ի Վարագ. թէ ձեր գրութեամբ թէ հարցաբանելով տեղեկացայ վանքիդ վիճակին. բայց դարձեալ ի՞ինչ և տեսից. վասն զի յէջմիածին գնալուն մտադիրութիւնը ինձ ետ. Ղևոնդ վարդապետն Պօլիսէն եկաւ և լիովին տեղեկութիւն տուաւ թէ պատրիարքն զԵրեմիասն իսպառ հրաժարեցուցեր է։ Թող այս յէջմիածին ևս իմաց տուած է վեհափառին որ եպիսկոպոս չի ձեռնադրեն։ Առ այս եղբայրսիրութեան ուխտին մէջ պէտք է որ Խրիմեանն վշտակից ըլլայ Երեմիային, զոր պատրիարքի խորամանկ չուան ի՞նոյց զինքն ի գուբ։ Ուստի մեք ևս իբրև վշտակից եղբայր պէտք է վշտանանք իւր հետ մինչև իր յաջողութեան կէտ որ անյայտ է մեզ։ Քանի մի լուրերը հաղորդեմ ձեզ։ Հմայեակ վարդապետ և Յովսէփ վարդապետ ի միասին ընկերանալով գնացին յէջմիածին երկուքն ևս այլ և այլ ապերախտութեամբ և անհաւատարմութեամբ։ Յովսէփ վարդապետի նպատակն այն է որ բողոքէ Աղթամարցւոց վրայ. իսկ Հմայեակ վարդապետն պատճառ բերաւ թէ ծերունի ծնողքս պիտի տեսնամ, պակասութիւն հոգամ և վերադառնամ. սակայն իւր թաքուցեալ նպատակ, զոր կարծեց թէ ծածկեց մեզմէ գիտեմ քաջ, որ է այս եթէ կրցաւ յաջողցնել պիտի կենայ յէջմիածին կամ Ռուսիոյ ուրիշ

վանքերը. իսկ եթէ ոչ միտք ունի հաստատ ս. Կարապետ վերադառնալ. հաւատալով թէ տեղւոյդ միաբանութիւն պիտի պատուով ընդունի զինքն որ չեմ կարծեր բաց Ղունկիանոսէն, որուն մտերիմն է խիստ։ Մեր. բաժին եղած չորս վանքերը թող տուին Վանայ Առաջնորդարանին կողմն։ Պողոս և Ժողովք յարգեցին Վարագայ թեմական նշանտուք դարձնել կրկին առաջնորդարանին վրայ. բայց մեր կողմէն փաստեր յառաջ բերելով անպատասխան մնացին և ճարահատ ըլլալով ըստ մեր առաջարկութեան վանքերն ընդունեցին. այս տնօրէնութիւն ըստ մեզ մեծ խոհականութիւն էր իրանց պարագաններ մտածելով այժմ։ Լուր մի հնչեց յանկարծ թէ Աղթամարայ անվաւեր դէտն, վաւերացած է բարձրագոյն դրան շնորհիւ թերևս պատրիարքին և համախոհ պէյերուն ներքնագործ խորամանկութեամբ։ Բարդողիմէոս վարդապետն սքանչելագործ վանից առաջնորդ կարգուեցաւ։ Անանիայն ևս Բարդողիմէոսի վանից Աղբակու։ Խիստ Գրիգոր վարդապետն խիստ անարգանօք հրաժարեցուցին, մեք ևս իւր ձեռք կոնդակ մի տուինք որ երթայ Կոփայ վանք նստի և Պուլանըխ գաւառի մէջ կարելի եղածին չափ դպրոցներ հաստատէ և տեսչութիւն վարէ, դուք ևս տեղէդ իրեն խրախոյս տուէք և նուիրակին ևս յանձնարարութիւն ըրէք։ Վարագայ ախոռները խիստ յաջողութեամբ լրացուցինք պատերը, միայն ծածք մնաց։

Վերջին լուրս ալ այս է, որ մեր յէջմիածին գնալը մնաց սեպտ. 22-ին։ Եթէ տեղւոյս գործքերը կարողացայ շուտով կարգի դնել պիտի Վարդավառին կամ Աստուածածնին դառնամ ի ս. Կարապետ. մեր սիրելի փափ ըստ պատմութեան պարոն Աւետիսին բարկացած է վրանիս և իրաւունք ունի. միջնորդ եղէք որ նեղողամիտ ըլլայ և համբերէ մինչև մեր վերադարձը։ Առ հասարակ բոլոր միաբանից ողջոյն և սէր մատուցէք յատուկ նամակ գրողներուն չի կրցայ նամակաւ պատասխանել։ Փանայիր չըլլալու համար ամենայն ժրութեամբ հոգ տարէք։ Լի

պարագայիւք նամակ մի կուզեմ ձեզմէ, որչափ կարելի է շուտ հասուցէք։

Ողջ լինել մաղթեմ մտերիմ սիրելեացդ
կենամ կարօտաւոր տեսութեան ձերոյ

1869
Յունիս 10
ի Վարագ

Մ. Վ. Խրիմեան

Բ.

Սիրելի վարդապետ

Յունիս 6և 11 երկու նամակներդ ստացայ. իմաստները շօշափեցի, Խան էֆէնդիի մասին եթէ պատեհութիւն բերէ քար մի կը դնեմք տեղը։ Վալի փաշային Մատրավանք դիմաւորեցինք, այն իրիկունը կօրաւ իշաւ. իրիկուան պահուն ժամ 11-ի միջոցներ կրկին անգամ քանի մի վարդապետով և Դանիէլ էֆէնդին հետերնիս առնելով՝ գնացինք վրան իւր հետը բաւականին խօսակցելէն յետոյ բուսհաթ խնդրեցինք, որ դաշտի Քայեաներ ներկայանան իրեն. իսկոյն հրաման ըրաւ։ Էկան շարուեցան չադրի առաջը յիսունի չափ մարդիկ։ Վալի փաշան մեծ վեհանձնութեամբ ոտքի կայնելով սկսեց իրենց ճառ մի խօսել լի ամենայն յուսադրութեամբ. այս ճառին հայրական և կարեկցական ձևը խիստ մեծ տպաւորութիւն ըրաւ ժողովրդոց վրայ։ Ճառին տեղն էր Եփրատին եզերք։ Աստուած տայ, որ այս յուսալիր ճառին ձայն՝ ջրի ձայնը չըլլայ։ Բայց դուք այս լուրը հաղորդեցէք Մանդումէին հանդերձ գովութեամբ. ինքն ևս խնդրեց, որ գրեմ Պոլիս և պատրիարքին։ Անձնական գովութեանց համար գինովցած է այս մարդ. միշտ ըմպել կուզէ այս բաժակը։ Համբերենք պահ մի ևս։ Խան էֆէնդին խաբեց, Խնուսի Միւտիր փոխեց,

կաղ սատանան հետ բերաւ. քիւրթերուն ևս բաւական երես տուած է. տեսցուք։

1869 յունիս 16
Ի վանս Գլակայ. Հայրիկ.

Գ.

Ժիր վարդապետ

Յուլիս 24 գրուած նամակդ Մուշը ստացայ, որուն մէջ նշանակածդ նիւթերուն և հաշիւներուն տեղեկացայ. Յարութիւն սրբազանին համար պատրիարք ըլլալու մեծ մասամբ ուշադրութիւն կայ պոլսեցի ազգայնոց մէջ. առ այդ ուրախ եմք միւս եպիսկոպոս եղբարց հետ բաղդատելով նա արժանաւոր է. միայն թէ հին մարդ և հին ոգին թողու։ Մուշէն 600 ստորագրութեամբ հեռագիր զարնուած է վարչութեան. դորա պատասխաններ կը պատրաստուի. այդ հեռագիր զարնել տուող Մխիթարն է, որոյ հետ լծակից են Կարապետ Ավրանցին և Արիստակէս. սոցա արբանեակներն են դաշտի հին շահախնդիր ըէյսները։ Այժմ կսպասեն սոքա, որ կառավարութիւն փոխվի։ Վսլի փաշան ազիլ ըլլայ, որպէս զի իրենց հին և խաւարեալ միջոցը դարձեալ ձեռք առնեն։ Մխիթար վարդապետին համար Տէրճան խորհեր էք այդ գայլուն ձեռք ոչխար մատնել մեծ յանցանք է. դորա փորձը ըրինք և խիղճը դեռ զմեզ կըտանջէ. նորա տեղ Երուսաղէմն է. կամ Բաղէշ Մամբրէին քով թէ և երկու աղուէսներ իրարու քով գալով դարձեալ հանդարտ չը պիտի մնան։

Օգոս. 7 վերջի նամակդ ևս ստացայ Խլաւուզ Յարութիւնին ձեռքով ստացայ նաև 10 արշին տիպէթ և Ման-

զումէները, Մասիսներով հանդերձ. կարդացի Մանզումէն մեզ քուէ կուտայ, Մասիսն Ցարութիւն սրբազանին. բան չունին թող գրեն Պոլսոյ եպիսկոպոսները և պէյերը. դրան էֆէնտիներ արդէն գիտեն թէ ո՞րը պիտի ըլլայ։ Տեղէս առ Մանզումէն գրուած 2 նամակները յայտնի են Ալրանցի Կարապետ վարդապետի ձեռքով եղած Մխիթարին խորհրդով, դորա արժանաւոր պատասխան մի կը պատրաստեմ յետոյ։

Կարնոյ թաղական աղաները կարծեմ թէ սեպհականապէս գնեցին զձեզ. և դուք գնեցիք, որ յազատ ծընեալ և անեալ ես։ Կիրակի աւուր դպրոցի յառաջդիմութեան համար շատ ուրախ եմ. Ձեզ նայեմ այդ ձեռնարկութիւնը մեծ և նուիրական է. անձանձրոյդ կերպով յառաջ տար և քիչ միջոցի մէջ յոյս ունիմ, որ ձեր արդիւնք տեսնամ. դուք միայն Կարնոյ նուիրուած չէք Եղիա մարգարէի հրեշտակին պէս այժմէն ձեզ իմաց կուտամ. դըլխուդ վրայ դրուած հաց կեր, զօրացիր քառասուն աւուր ճանապարհ ունիս գնալու. այս է ահա քու վիճակը եթէ ազատ հրամանի, ազատ հպատակ կը ճանաչէք զձեզ։ Մխիթարեան Յովհաննէս վարդապետին վրայ արդէն ձեզ յայտնի է, որ չորս հազար դուրուշէն աւելի պարտք եղած է, իւր թողուցած բաները այս գումարին կէսը անգամ չեն բռներ. պոլսեցի խեղճ Ստեփան 1200 այսքան ղ. կուզէ. ուստի այս Մ. Կարապետին ողջոյն ըրայ մեզմէ յիշեալ վարդապետին պարտքը վճարելու համար պէտք է իւր ինչքերը գոռոմայի դրուին, այս իրաւունքով իրեն 150 ղ. հազիւ հասնի։ Ուստի իրեն դարձեալ բարիք կամենալով այսքան կարող եմ վճարել. Մեսրովպ վարդապետի ժամացոյց իրեն կուտաք և անդորրագիր կառնէք կամ թէ հագուցեալ վարդապետին ձեռագիրը, ասկէց աւելի ուրիշ բան մի չունիմ։ Գանք հիմայ Ձեր պահանջի մասին նոյն պատասխանը հարկ է, որ ձեզ ալ տրուի ուրիշ կերպ կրնամ պատասխանել։ Հայկազնեան բառարաններուն համար առաջարկութիւն մի ըրի։ այդ առա-

ջարկութիւնը հանելուկ մի էր, զոր չի կարացիք լուծել. պէտք էր այնպէս լուծէիք. «Ի նշան երախտագիտութեան որդիական սիրով նուիրէ սոյն Հայկազնեան բառարանները իւր դաստիարակ մօր մենաստանին Վարագայ»։ Զաղ իմ, Արծուէն դուք միայն գրելու թևով թռչիլ սորվեցայք առաքինութեան թևերդ դեռ չի բուսան. կը ներէք որ ձեզ բռնի առաքինութիւն տամ գործել հակառակ ազատ կամաց։ Լուր ուրեմն. բառարանները Վարագ պիտի ղրկեմ. որովհետև հոն տեղի թանգարանին մէջ չիկայ. իսկ Ձեր չորս հարիւր ղուրիշին տեղ ըստ իրաւանց պէտք է վանաց անտուկէն չորս հարիւր ղ. ամբողջ չի վճարուի. այլ պէտք է 200 ղրուշով գոհ լինիք և այս գումարը կղրկեմք միամիտ մնաք։ Առ այս վեհանձն եղիք մի դժկամակէք. եթէ դժկամակիք հարկէ, որ ես ալ սրտմտիմ։ Դաստիարակութեանդ կարգին մէջ կրնամք համարձակ ուսուցանել, այն մասերը, զորս դուք նախապէս գործելու չէք մերձենար։ Գիտէք դաստիարակութեան ազդու քարոզ օրինակն. առանց օրինակի զուր մի ջանար խրատել և համոզել։ Անձուկ վայրկեաններուս մէջ այս քանի տողերը գրեցի ձեզ, զորս խոնարհութեամբ ընդունել կաղաչեմ որ իբրև մոռացեալ պարտք զգայք. և բաւ և բարի է ձեզ։

Այս անգամ դարձեալ խլաւուզ Արթինին հետ 60 մանէթ թուղթ ղրկեցի. որով պէտք է պատրաստէք այն բաները, զորս առանձին ցուցակով նշանակած եմ. բոլոր առածդ բաներուն այս անգամ պէտք է շղթայաձև յատակ ցուցակ մի ղրկես, որ մայր գումարին մէջ առնել տամ։ Քիչ ևս ուրիշ լուրեր հաղորդեմ. Վալի փաշան այժմ Բաղէշն է. թերևս այժմ Պուլանըխ գալու ճամբայ ելած է. Գրիգորիս վարդապետը Մուշէն ի Պուլանըխ գնաց, որպէսզի տեղի խնդիրներ պատրաստէ. ժիր և գործունեայ կերպով կաշխատի Գրիգորիս վարդապետը. կրօնական և քաղաքական ժողովները առժամանակեայ կերպով հաստատած է. ինքն ևս եկեղեցւոյ օրէնք հաստատ պահելու համար խիստ նախանձաւոր կերպով կընթանայ.

անաչառ կերպով կը պատժէ ամուսնական պարտուց դէմ օրինազանց գտնուողները, որոնք լի են Մշոյ երկրի մէջ. մեծ յոյս ունիմ քիչ ժամանակի մէջ Գրիգորիս վարդապետ մեծ անուն պիտի ստանայ իւր պաշտօնին մէջ. միայն թէ կարողանայ իբրև հաստ կաղնի դիմանալ բրոնաշունչ հովերուն։ Մեր մտադրութիւն ևս այն է, որ վերջին անգամ ևս Վալին տեսնամ ի Խնուս կամ ի Պուլանըխ։ Քարձոր մահլուլութեան վիճակէն ելաւ, այս մասին նամակ մի գրեցի բարձր կուսակալին. Դանիէլ էֆէնտիին ձեռքով գործը գլուխ գնաց, Մշոյ երկրի ընդհանուր խալահաթին համար մեծարոյ Յակովբ աղան գրած է. որովհետև մեք ևս վալիէն յատկապէս խնդրեցինք. նմանապէս դաշտի միւտիրութեան հրահանգներն ևս թարգմանած է. ասոնք մէկ տեղ քանի մի կտոր թուղթեր են ահաւասիկ Ձեզի կղրկեմ, որ շուտով Մանդումէին ղրկէք որ հրատարակուի և յայտնէք որ հայրիկին խնդրանօք Վալի փաշան ի ձեռն Դանիէլ էֆէնտիին և Յովասափեանին հայերէնի թարգմանելով ղրկած է իրեն։ Վալի փաշային հարկ եղած գովութիւնները աւելցուցէք նմանապէս չի մոռնաք Դանիէլ և Յակովբ էֆէնտիները։ Քարձորին Վալիին առ իս ուղղուած նամակն ևս ղրկեցի, բայց հրատարակել պէտք չէ զայն։ Հոս տեղ թշնամիք հրատարակած են թէ Վալի փաշան ազիլ եղած է. ասոր վրայ ստոյգ տեղեկութիւն մի կուզեմ։

Հայրիկ

1869 օգոս. 12
ի վանս Գլակայ

Առ որ զիս հարցանեն մեր
ողջոյն տուր։